№ 4 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐ 11

1895

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՓԵՏՐՎԱՐ 11 № 4

«ՇԱՒԻՂԻ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 րուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 րուբլի։

Արտասահմանից փողի համար պէտք գիմել հետևեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россiйской ИМПЕРАТОРСКОЙ Миссiи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂԸ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։

Նամակների, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Perse)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գաւառական թղթակիցները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խմբագրական Կալկաթայի «Statesman» լրագրի. Նամակ Սալմաստից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՖԷԼԻԵՏՕՆ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

—

— Ինչո՞ւ էք տպում ձեր Զ. թղթակցի նամակը, չէ՞ որ նրա ոչ մի կտորը ճիշտ չէ»… գրում է մեզ գաւառացի թղթակից X-ը։

— «Ցանուն ամենայն սրբոց, ձեր X թղթակիցն էլ լուր չը մնաց որ չը հնարէր» գոռում է Z թղթակիցը։

Խմբագրութիւնն անձամբ այդ թղթակիցներին ճանաչելու հնարաւորութիւն չ'ունի և ոչ էլ ստուգելու նրանց տւած լուրերի ճշմարտութիւնը։

Ո՞րն հաւատալ ուրեմն։ Կարծո՞ւմ էք որ հայ թերթը նիւթական այնքան ոյժ ունի, որ գլխաւոր քաղաքներում իր սեփական թղթակիցներն ունենայ և նրանց հաղորդած լուրերի պատասխանատւութիւնն իր վրայ առնի, նրանց բացարձակապէս հաւատ ընծայէ։

Յաճախ, ամիսներով իրեն մի որոշ ուղղութեամբ թղթակցող թղթակիցը— պարսկահայերի մէջ գոնէ—յանկարծ, ով գիտէ ինչո՞ւ, փոխվում է դէպի հակառակ ուղղութեան և խմբագրութեան վրայ է տեղում միմիանց ետևից նամակներ, որոնցով նա լիովին ջրում է իր նախկին ասածները. խմբագրութիւնը մնում է շուարած. եթէ չէ տպագրում, ստանում է այսպիսի հարցեր «ի՞նչու չէք տպում, ի՞նչու էք կամենում արդարութիւնը թագցնել, անաչառ եղէք» և այլն։

Օրինակ. Դավրէժից անցեալ տարի «Շաւիղը» ունէր մի թղթակից, որ մինչև № 31-ը, ամէն շաբաթ գովասանքներով լիքը նամակներ էր գրում Ատրպատականի առաջնորդի մասին. «Նրա քարոզները սրտառուչ են, հիանալի տպաւորութիւն են թողնում, անմոռաց կը մնան… Նորին սրբազնութիւնը տգէտ քահանաներին վռնտում է… Նորին սրբազնութիւնը անկաշառ է…» և այլն և այլն։ Եւ ահա № 42-ից թղթակիցը լիովին հակառակն է գրում. այժմ «առաջնորդը բեմի վրայից հայհոյանքներ է արձակում և գզւանք շարժում… Նրա դէմ բողոք են պատրաստում…Նա 90 թուման կաշառք կերաւ…» և այլն. ինչ կասէք դրան, խմբագրութիւնը ինչպէս վարւի։

Մի ուրիշ օրինակ։ Դավրէժի նոյն թղթակիցը, խօսելով մի ինչ որ «Սէր» ընկերութեան հիմնադիր Ս. Միրզոյեանի մասին, № 23-ից երկինք է բարձրացնում նրան. «գովելի է հիմնադրի եռանդուն գործունէութիւնը… մենակ առաջ է տանում իր սրտի մօտիկ գործը, ահագին զոհողութիւններ յանձն տանելով» և այլն։

Իսկ չէ անցնում մի քանի ամիս և ահա թէ նոյն թղթակիցը այդ «ահագին զոհողութիւններ յանձն առնող» պարոնի համար ինչ է գրում № 44-ի մէջ։

«Գիտութիւն գոռացող «Սէր» ընկերութեան նախագահը (դա հիմնադիրը— ինքն է) Լիլավալի տղայոց ուսումնարանում վերակացու է և առանց կարմրելու պիտի մարսէ լուացարար ու հացթուխ կանանց որդւոց բերանից կտրւած կոպէկները»։

Ի՞նչպէս վարւել, եթէ ոչ լիովին դէն ձգել այդպիսի թղթակցին։ Պարզ է որ խմբագրութիւնը այլ ևս չի համաձայնիլ տպագրելու այդպիսի թղթակիցների գրածներից մի տող իսկ։ Բայց ի՞նչ գիտենար նա սկզբից որ այդպէս էր լինելու. չէ՞ որ թղթակիցը մինչև № 44-ը մի որոշ ուղղութիւն ունէր (վատ կամ լաւ) և նրա բոլոր թղթակցութիւնները փաստերով ողողւած էին թվում (ճիշտ կամ սուտ լուրերի հիման վրայ)։ Նամակները տպւել են և խմբագրութիւնը շատ ուշ է գլխի ընկնում։ Մեղաւո՞ր է խմբագրութիւնը։ Միայն այն թերթի հետ չէ պատահում այդպիսի դէպքեր, որը ունի իր սեփական թղթակիցը, որի ուղղութեան հետ նա ծանօթ է և որի վրայ նա բացարձակապէս վստահ է։

Այժմ ուրիշ տեսակ թղթակցութիւններ։

Անցեալ տարւայ № 48-ում մեր Ուրմիոյ թղթակիցը խօսելով այդ գաւառի վրայ նոր նշանակւած կրթական տեսուչ քահանայի վրայ, գովասանական լեզու է գործածում նրա մասին։ Բայց բանից դուրս է գալիս—այս համարում տպւած թղթակցութիւնից և մեզ ուղղված այլ նամակներից անգամ—որ այդ քահանայ դարձող պարոնը մի կօշկակար է, Փոկունեկ և այլն։

Ո՞րն հաւատալ։ Սկզբում եկել է գովասանական նամակը. խմբագրութիւնը մտածել է «գուցէ լաւ է, մարդիկ գրում

ՖԷԼԻԵՏՕՆ

(ԴԱՒԱՌԱԿԱՆ)

Ազգային մարթերը Սալմաստում.—Օյինբազի տէր-տէրը.—Սալմաստի տեսուչը.—Պարզը քամակը շուռ կացուցող վարժուհին.—Սալմաստի լուսաւորիչ վարթըպետը.—Ինգիլիզի փըշտօվն.—Թարվէզի ջոչ առաջնորդը.—Թարվէզի նոր կօնձիտորը.—Մեր իշխանքները.—Կռօների փիշքիաշը.—Իմ խօքեպաժինա։

—

Ախպէր, այամը լաւ փոխվի՛ր ըի. Նաշխիքիրթունը կոխիրի մեգիկար, նեա պախս'ի մնացի, նեա ժամ, նեա հաւատ. ջանում, էլ դի՞որ Աստված կրակ չը թափի կօտըքերիս…, Էհ՜յ բալամ, ի՛րի առչըվան այամը, ասեաէն ժանգըպտերը կոխելի, մորեխը հասըլը ուտելի, ո՞րն ասեմ ո՞րը, էդ ըմէն մեր մեխկերէն'ի,ըմէն։ Ա՜խ,էտ թաղա չըմանիըը,էլ բեջա-բեջա զատեր ասես, որ մէնըքերէն չ'ըելի….։ Էդ ըմէն դարդբալան մէ թեխը, էդ զահըըմար ազգային մարթները մէ թեխը՜, խոքիս կուրսըվի ադիար սուտ եմ ասելի, մորեխից, ժանգից, ըմէն զադից էլ աւելի դարդ-բալայ, կրակ ցաւ էլան մեր կօտին (գլխին)…։ Օըը մէ լաւին (տեսակ) մարթի' տիւս իկեալի մէյդան…։

Մէյ տըսար մէկն էկաւ դարվիշի լըման ծամ'ի թողի, եքա քեառեշքի (ձիւն սըբելու թիակ) կօթի լըման մէ փետ պռների ձեռը՜, կապուտ չեշմակը աչկերին, հայդը-հիւշտով իկեալի կեղի մէջէն ըսնելի….։ Ջանմ, էդ անտէր չունէրն էլ էն դասմէն վախենալի, ախու կըծըկվես էն, չէն խաչելի։

Մէկն մէ դարվիշի եարու խեծիրի, խայիր լավին թափ թըքանգի կախի, էյ այնալու, էլ ղըումայ, էլ խանչալ, էլ թափանչա, եանամ, ախրէր, խայիր լավին զադ, եսի մէ զույ-թիւքի պարց կապիր'ի եահարի վըըան վեար կալոզ ըը՜ը… փօհօ՜, հալա մէ դարան ըշկացէք…։ Ախպէր, ադիար դին զօչաղ մարթէս' իր էս քիանց թաղա-խալսին պարց տնելի տակդ, մախլաս….։

Մեկելը, տըմնասես, մէ նեղ չըլվար խաքիրի, մէ ճօռըկաթ քիթագ կօխիր'ի ինչու անգաջքերը, մէ տալար ճիպօտ պռնիրի ձեռը, սուսփուս, օց պռնողի լըման, շուռ իկեալի։ Տըրնես՝ կասես խամաւոր խարս'ի, ամմա դին դիար ներսէն խաբար առ, փօհօ՜, քիանց մօլլա Նասրադինի կապած որթըկան «բունի գօյասան' նէջա գաչար։»

Առջին էլը մէջըծառ աղէկ էր, մըկա պաներա եւրի խալիս պանջար…. առջին էդ գիօրսաթմանները եավաշ-եավաշ մեր իշխանքերու (հարուստ) կլօխը քիօլօզին, մըտան դամալքերը, մէկն էլաւ տեսուչ, մէկն էլաւ վարթըպետ, մէկն էլ վարժապետ. մէկը կար, ասես էր եա օյին գիդա խանեմ, (էդ ըմէնէն աղէկն էր,) էն էլ օյին չ'խանեց բարէ թամաշա աննըքեր…։ Տօ, ասեսնէր էդ օյինխանողը եւրի տէր-տէր, կինացիրի Որմի, մխպէր, մաթալ մնալու պան չի՜. օյին խանո՜ղը իւր՝ տէր-տէրը իւր…. ա՜հ, ինչ իմ խելքը, ինչ որմեցիների խելքը, ինչ մեր ջօչ առաջնորթի խելքը….։

Տօ՛, էդ տեսո՞ւչ'ի, ինչ զահըումար'ի, քախցու խատնեսէը քիանց Ալաքպարին, մէ ճըըմըռ զադ էր, ըմէն օր վիզը փօըը քիաշած, սուս-փուս, կըրի (կոյր) լըման փետը տըպտըպացնելով՝ Ղալասարըեան Փայաջուկ չափէսէր. եա առջին ասիմ էդ կըր'ի, եսը լաւ վարավիւրդ արիմ, ջանմ դիար աչկերը կօ՜ պըղտըպըղտալի՜…. ալըալ խասկըցամ որ էդ երաբախան մարթ'ի, ասիմ դեարմէն խաթա կը կայ մարթի… խաչերա, մարթ դեարմէն գիդա փախս ըը՜ը…։ Էդ մեր իշխանքերն էլ եանամ, իշթահար մարթ էն մըդայի փող ունեն՝ հենց ոժեսեն խելքըներին. պերին զօռով-գիւջով ասին գիդը տեարը ըմէնա հախ տանք, անենք մեր վարժատունքերուն տեսուչ…. մեղայ-Աստծու, ասիմ ջանմ, իմ ի՞չ պարտքն'ի ես տատեմ պերեմ տամ խասուըվիզ երաբախանն ուտի։ Ախըըը քէ ղուըբան, մէ ընծիկ խասկըցուցէք տըմնամ էդ տեսուչն ի՞չ զադի, չեմ ասելի չ'տամ. տա՛մ, ամմա մէ խասկընամ եսի եա տընաւերս։ Կլօխ չ'եկաւ, ասին քիօյ խելքի պանը չի, էդ մէ շա՜տ խելացի մարթ'ի, ֆըռանգստան մէ կաղէթ կիրող կայ՝ դիար կակօն'ի, քըսանչըըս լեզու գինայ, էլ հինդ ու հինդուսթան, չիմանըլու բօսթան չի թողի ստուգ' ներ…. մա՜խլաս դիարը գիտա հաց տանք որ մեր վարժատունները լուսաւորցուցի….։ Իշօ՞ էր, ալըալ խասկըցամ ու փօղի թալայի, ամմա մեր իշխանքերու մօտը գինամ եածըկալ, (ձայն հաննըլ) տղայ ե՞ս, ախու ասիմ աղա՛, հախ էք ասելի, ես էլ կ'տամ. ամմա սըըտիս մէջա ասիմ էդ երաբախանը մեր կըլխին հալա շատ օյինքեր գիտա խանի….։

Իմ խօսքերը կանանչան, մեր մօղօզիկ տեսուչի շորն էլ ելաւ (գոյնը դուրս տւաւ)…. ասեսեն էդ ըսկի զադ չի նալի. սութ տեղը մուրուսը բիզացուցիրի՜, շուռ իկալի. տնաւերը ֆըռանգստանի անըմն էլ խարաբ արաւ…։ Ախու չ'ինալի աղէկ վարժապետքեր պերի, վախենալի ուր սութը խաննեն, կինացիրի իշըըդայ ուրան լըման դալլաք, դիւլգիար, դարզի, սահաթսազ կայ՝ պերիրի արիրի վարժապետ….։

Մեր իշխանքերու պերանն էլ պամպակ չ'ի կռելի, չ'էն ասելի տօ, խատըըվիզի, իւրէ՞ քիօյ վարժապետքերը. սութը սատանային, մէ թիֆիլցի ախչիկի պերի, ինչ ասիրենէր «Պուտուկը գիլըըվիր՝ի. խուփը գիդիր'ի,» մխպէր, տըըսիրենքէր պարցը կլխին կը տըննէր, էդ տընաւերի ախչիկը անջախ կապիր'ի քամակը… աղէկ էլաւ, խաչէրը, տեսուչը ուր մուրուսըն'ի բիզացուցելի՜, վարժուհին քամակը՜…, օխմա՜յ, աղէկ ուսում կ'տան մեր ախչիկքերուն…. էլ դի՞օր չ'ծռվեմ (կատաղել) եա։

են, ինչու չը հաւատալ»... և ահա նա խաբուած է երևում, դուրս է գալիս որ թղթակիցը խաբուել է. կամ գուցէ հէնց չէ խաբուել, գուցէ իր տեսակէտով, իր համոզումների հիման վրայ այդ գործակալը լաւ է, գուցէ նա մտածել է թէ «գովելով՝ վզին դնենք որ լաւ լինի»...

Ի՞նչ անի խմբագիրը. ինչպէս վարուի, երբ թղթակիցներից ամենքը չեն գրում անկեղծարար, երբ ամէն մէկը մի բան է ասում և խմբագրութիւնը հնարաւորութիւն չունի ստուգելու և կամ եթէ ստուգելու միտք ունենայ, այն ժամանակ յատկապէս մարդիկ պիտի ունենայ, որոնք զբաղուէին եկած թղթակցութիւնների համար տեղեկութիւններ ձեռք բերելով և նրանց լուր ասածների ճշմարտութիւնը վաւերացնելով։

Մնում է ուրեմն, միմիայն այդպիսի դէպքերում, հիմնուել մի քանի արմատական համոզմունքների վրայ և այնպէս վարուել թղթակցութիւնների հետ։

Որև խմբագրութիւնը մտադիր է անել Անխղճաբար վերաբերուել դէպի թերթը—նոր բան չէ հայերի մէջ։ Ով մի անձնական ոխ ունի մէկի հետ իսկոյն գրում է լրագրութեան մէջ. «սպասիր, ես քեզ կը խայտառակեմ»—ղեկավարվում է նա այդ մտքով. և որովհետև շատերը այժմ գիտեն որ միմիայն հասարակական գործողների մասին կարելի է գրել թերթերում, հնարում են «հասարակական» լուրեր իրենց թշնամուն խայտառակելու համար։

Օրինակ. «այս ինչ պարոնը ազգի փողերն է ուտում, այս միւս պարոնը որ խեղճ մշակների է թալանում, հասարակական փողերը տոկոսով բանեցնում է» և այլն և այլն։

Մթթէ դժուար է այդպիսի ամբաստանութիւններ տեղալ մէկի գլխի վրայ մի ծածկուած ստորագրութեան տակ մտած. ով զլուխ ունի քարշ գալ դատարաններում, խմբագրութիւններից պահանջել գրողի անունը և այլն։ Եւ այդպիսով հայ լրագրի անունն էլ ընկնում է, որովհետև պօլեմիկաները դրուեցնում են ամեն մի հասկացող մարդու։

Միւս կողմից եթէ առաջնորդը վատ է, հոգաբարձուները անպիտան են և այլն թղթակիցը լռում է այնքան ժամանակ և գովում է մինչև իսկ, քանի շահ ունի կամ շահ է սպասում նրանցից, բայց երբ յոյսը կտրում է որ առաջնորդը իրեն քահանայ կը ձեռնադրի և կամ հոգաբարձուները իրեն պաշտօն կը տան.., նա գրիչը սրում է և եթէ առաջնորդի պատկերը տգեղ է, իր կրքի արտայայտութեամբ նա աւելի տգեղացնում է. եթէ հոգաբարձուները անհոգ են կամ լիմար, նա ցեխի հետ է հաւասարեցնում նրանց և այն էլ... առանց փաստեր տալու, լոկ դատողութիւններով...

Եւ ահա թերթը այդպիսով ընկնում է մի այնպիսի դրութեան մէջ, որից դժուար է մաքուր դուրս պրծնել, եթէ խմբագրութիւնը աչքերը չորս չը բացանի։

Կան ուրիշ տեսակի թղթակիցներ էլ, որոնք երբ հասարակական մի որևէ խնդրի կամ անձնաւորութեան կամ կուսակցութեան մասին գրում են, ոչ թէ փաստեր են տալիս, այլ միայն դատում են...

Մի խօսքով պակաս չէ փաստեր, որ թղթակիցները լաճախ մամուլը իրենց կրքերի ասպարէզ են շինում և նրա վստահութիւնը չարաչար գործածում, դնում նրան անելանելի դրութեան մէջ. սրովհետև նա չէ կարող մի թղթակցութիւն ստանալու ժամանակ սպասել թէ դրա դէմ գրող կը լինի որ ճշմարտութիւնը երևան գայ։ Մնում է ուրեմն տպել իրեն քիչ ճշմարտութեան մօտ երևցող թղթակցութիւնները և եթէ ապագայում նա նկատի որ իրեն խաբել են, խաբեբայ հրատարակի թղթակցին և ապ[illegible] ոչ մի ոգը չը հրաբերի թերթի մէջ։

Այդպէս էլ կը վարուի «Շաւիղի» խմբագրութիւնը. մեր ընթերցողները նկատել են որ նա ունի իր որոշ ուղղութիւնը. այդ ուղղութիւնից նա չի շեղուի մի մազաչափ անգամ։ Խմբագրութիւնը այսուհետև լուրջ կերպով կը զննէ իրեն ուղղուած թղթակցութիւնները և առանց վարանելու նա հրապարակով ստախօս կ'անուանէ այն թղթակցին որ կը խաբի նրան՝ սխալ լուրեր հաղորդելով։

Նա չի տպագրի ամբաստանութիւններ, եթէ նրանք չեն հիմնուած փաստերի, ակներև համոզիչ փաստերի վրայ. գովասանքներ, եթէ նրանք չ'ունին իրը հիմք օգտակար հասարակական գործունէութիւն։

Շնորհակալ կը լինի, եթէ թղթակիցները տան նրան փաստեր, միմիայն փաստեր, որոնք հազար անգամ աւելի պերճախօս կը լինին, քան մի քանի երես լեքը փիլիսոփայութիւններ։

Մենք դեռ էլի առիթ կունենանք խօսելու գաւառական թղթակիցների հետ ցոյց տալու համար թէ ինչպէս պէտք է լինեն նրանք, ինչ նիւթ պիտի ընտրեն և ինչպէս մշակեն այդ նիւթը իրենց թղթակցութիւնների համար։

Ա. Ֆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԼԿԱԹԱՅԻ «STATESMAN» ԼՐԱԳՐԻ

28 դեկտ. 94

Թերևս, կարծվում է թէ ազգասիրութիւնը և հայրենասիրութիւնը բնականապէս անջատ են միմիանցից և մէկ առանձնութիւն ունեցողը պէտք է բնականաբար միւսին ևս տէր լինի։ Սակայն աշխարհիս ներկայ ազգերի մէջ շատ օրինակներ կան, որ դրա հակառակն են ցոյց տալիս։ Գերմանացոց, յունաց և իտալացոց մէջ այս երկու յատկութիւնները միմիանց հետ սերտիւ կապուած են և երկուսն ևս միևնոյն բանն են նշանակում։ Այս ցեղերի մէջ ազգային եռանդն և հայրենեաց սէրն տնրաժան են։ Միւս կողմից գտնվում են նաև այնպիսի ցեղեր որոնք քաղաքականութեամբ և զգացումով ցեղասէր են և որոշվում են մարդկային միւս ցեղերից իրենց ազգային անանձնութեամբ. բայց իրենց հայրենասիրական զգացմունքը բոլորովին կորցրել են։ Գրեթէ աւելորդ է յիշել հայերը և հրէաները իբրև ապացոյց։ Անտարակոյս այս ազգերը սկզբից բռնութեամբ հալածուեցին իրենց բնիկ երկրներից, բայց ժամանակի ընթացքում այն մագնիսական զօրութիւնը, որ հայրենի հողն է կարծվում ունենալ, իւր ազդեցութիւնը կորցրեց։ Այսպիսի մտածութիւնները մեզ յիշեցնում են այն սուսկալի աղէտները որին վերջերս հայերը ենթարկվեցին։ Այն խեղճ ժողովուրդը՝ որի վերայ մենք խօսել ենք ուզում, մնացորդն են այն ազատասէրը և զօրաւոր ազգի, որ երբեմն Եւրոպայի և Ասիայի մէջ պետութիւնների կարգն էր դասվում։ Դարերից ի վեր ամենասոսկալի դրութիւնների ենթարկուած՝ հայ ազգի մեծամասնութիւնը չի կարողացել իւր հայրենի երկրի վերայ մնալ և օտար երկրների մէջ է որ ապրել և զարգացել է։ Միայն Կոստանդնուպոլիս կարծվում է ունենալ 130,000 հայեր։

Միջնադարեան ժամանակներից ի վեր

Վազուց չ'եմեր տրսի, էտ կաղէթ կիրոզի կակօն'ի, իշ կօռադար'ի, դիարը. եռանդ տրսամ էլի կօ լավինը սրռճրվիր'ի, էլը վիզը քիաշիր'ի փորը, խեղճ-խեղճ, մէ թուխտ դրիրի թեի տակը, շուռ իկեալի. ալբալ խասկըցամ, որ էդ մօղոզիկը էլը ծաւար—կօրկոտ ունի աղալու.... ախար խմայ'ի էտենց խեխճացի....։

Տու մի ասա, դիար մէ կակօյի լաճն էլ Թարվեզ ելիրի վարթըպետ, ուզես են դիարն էլ պերին մաուցեն Սալմասա... խօսկ խօսկի ասն Սալմասա թանեն....։ Ասված ինսաֆ տայ մեր իշխանքերին, ազիար կասեմ դեանք ըսկի զաղ չ'էն նալի, իշթար ասեմ. ախր մէ ֆիքը չ'էն անելի, որ մէ կակօյի լաճուն տեսուչ արինք ինչ արաւ, որ մէ կակօյի լաճուն էլ փոխանորթ'ի, կարքիչ'ի, ինչ կօռադար'ի, ամ անտէրքերի անրմքերն էլ ուրանց լրման ըէջա-ըէջայի... խար դիարն էլ կարքիչ լուսաւորիչ անենք, ինչ ըլը՞...։

Կլօխ չ'եկաւ, էնքան զընացին էկան, ինչու ախբրին էդ Թաղա վարթըպետին պերին խանին Սալմասա....։ Բէֆ մրկայ տեսուչինն'ի. Թուրի համ առաչն'ի կռելի, համ իտեր՞...։

Լրսիրենրեր մեր Ջոշերէն, որ կասենէր, «Հարամիղան կուրթուլդի դաղմաչիեա թուչ գեալդի...» էդ օյինը խալիս մեր կլխին'ի էկի։

Թաղայ լուսաւորիչ վարթըպետը, մարթի լեզուն էլ չ'ի բռնելի որ դեար անրմքերը ասի Ջանմ, կեսխ ասեսեն Արսէն, կեսխ Վհուկ, կեսխ Բուլդար, կեսխ Էրէց (աղօրթ որ կրակ տրեց Սալմասա Էրէց...։) Վամի գինալի, ախբէր, խաղար մէ լավինն զաղ էն ասելի, ամմա ես հէնց գիւզա-գիւղ վարթըպետ կասեմ, կուղի հէնց խալիս ուր աչկի մէջը...։

Էդ Թաղա վարթըպետը Սալմասա էկաւ չ'եկաւ, Թաղա նաւրաղքեր (կանոններ) քոքեց. պերանը ջըվալով'ի պացելի, էլ խինդ դռան, մէ Թիման խօ չ'կայ, քիանց Խոայ-խանին խայիր Թիման, յիսուն Թիմանով'ի զուրցալի...։

Եռանդ իշղրդայ տէր-տէր կար Սալմասա ժողվիր'ի, մէ քարօզ'ի տուի՝ որ դուք տէր-տէրքեր զիտը ձեր ժողովուրթէն զօռ ըլէք, վամ խօսա՝ տուէք կլխի մէչա ճառթէք, անպատէք, իետ տրսաք տեղը մէպրծաւ զօռի, ոժըրերդ չի ախանելի, Թարվէզու Ջոչ առաջնորթի լրման պանցրրցէք սեղանը, չորէք, աշկըներ Խրիէք, պերանքերդ պացէք, ինչ ուշունց, քեաշում ուզեսեք տուէք, մի վախացէք, վամ որ մէ պրծաւ աւել պակաս զուրցա՝ Թաերը կապել կ'տամ Թաւրէզ կ'քաշէն առաջնորթի Թաղա կօնձիստօրում դեանց դիվանը անել կ'տամ....։

Հալա մազալուն էն'ի, որ վերցիր'ի զինքը ուր խրմայ մրվաջիր'ի նշանակի, ետը պաժնիր'ի կեղերա, ասելի զիտը էրկու խայիր քառասուն Թիման մուվաջիր տաք ընձիկ...։ Բարով տրսանք խաղար պարի, անընհոր և որթոյ, վարթըպետի մրվաջիր չ'ենքէր տրսի, էն էլ տրսանք...։ Խօ սարփարադ չի որ մուվաջիր տանք...։

Տօ, էդ տրնաւերի ըսկի զադը վարթըպետի լրման չ'ի։ Տըսիրենքէր վարթըպետը գիդուն, կատարեալ մարթ կլեր, ժողովուրթին կասեր որթիս, ջանս, բալաս, դեար լման դադեր. էդ անջաղ ասելի «ծէնքերդ կռէք, ձեռդ տիր որտիդ, մի համարձակիր, շուն, անզգամ», զինքը նստելի ձին, տէրտէրքերը քրցելի իտեը, ասելի դուք ստով քելեք, որ իմ և խօքեորականի պատիւը աւելնայ։»

Բռնելի զինքը ուր ձեռովը կնիկ'ի թրփելի... ըը՛յ-ըը՛յ-ըը՛յ... էդ մարթի կլխին, խաչերը, ցուրա՛ի կրպի, ուրը կուրսիր'ի խալիս...։ Բա մէ ֆիքը չանելի, ախր ես վարթըպետ մարթէմ, ընձիկ ինչ կ'լեռ՝ (կ'սաղի) իմ ձեռովս բրռնեմ կնիկ թրփեմ, մախլաս, լօթիյ'ի, ինչ վարթըպետ։ Մէ պրոպրդան զաղ կօ կախիրի կշտէն, առչին դիր տրսամ, ասիմ ազիար էդ ջղդան'ի՝ (ջղդան մի կաշուէ աման է որ կախում են կողքից) ջղդան չի, ազիար սահաթ'ի, էդ իշթաչ սահաթ'ի, ազիար էն ջհուդի դալամդանքերնն'ի՝ էն էլ չի. ախպէր, լաւ վարավիրդ արիմ, քո տունը չ'ծակեմ, էդ ինգիլիզի Թաղա-չիմայ Թափանչայ'ի... խէտ գիտցամ չ'գիտցամ՝ Թողիմ ինչուկ տուն հա փախամ....։

Բաս ասեսեն, ախպէր, էդ Թարվէզ նստող ջոչ առաչնորթը չատ խելացի-կլոխ մարթ'ի, ընդեար լման խելացի մարթ ըսկի էշմիածին էլ չ'կայ։ Բա էդ ինչօ'ի ելի որ դեար լման մէ ջանի-ջիւանի վարթըպետ'ի արի, զրկիրի մեր կլխին բաշի բալայ...։

Ասեսեն էդ ջոչ առաչնորթը Թարվէզ Թաղա կօնձիստօր'ի չինի, Ալչամբիլքի տէր Ակոփին, մեկէլ Մուժումբարի տէր Մըկռտիչին'ի կարգադրիչ նշանակ'ի, քո խելքին էլ ձիւն իկեայ.... (էն էլ ասնամ իշթաչ մարթ'ի...) օղորմած խէր, մեր տեսուչին, մէյն էլ մեր վարթըպետին կանչի տար է (ասեսես 24 լեզու գինա...)։ Եօխսա Թարվէզ էնէնց մարթ դեար էր, որ քիչ կօնձիստօրը կառաւորի...։ Մարթ չ'կայ որ առաչնորթին խասկացուցի, դեանցը Սալմատից տանել տայ Թարվէզ, համ ուր կօնձիստորը կ'լուսաւորցուցէն, համ էլ մեր եախան կ'պռծընի դեանց ձեռէն....։

Տօ, եռանդ էդ օց պռնող տեսուչը, էլի մէ Թուխտ տրիրի Թեի տակը, շուռ իկեալի, վամ իկեալի՝ տրսար ալբալ քիթագը խանեց, տաղ կլօխը պացաւ, ինչու էէսը ծրռվելի, ասելի. «պարոն, դուք ազգասէր էք, պարոն, ձեր ունեցած սէրը զէպի ազգային գործերը մեզ քաջ ծանօթ են...» Վերջը պերելի որ էդ շնորհակալութեան Թուխտին Թեի քեաշէք...։ Թուխտը գինասէք ինչ Թուխտի, փահ'մէ մազալու զաղ։

Վենետիկը եղել է մի հայկական զարգացեալ միաբանութեան գործավայրը և այս միաբանութեան արդիւնքը հայկեան լեզուի և գրականութեան վերակենդանացումն է։ Նոյնպէս և Ռուսաստանում ոչ միայն լոկ Աշտարխանի մէջ, այլ հիւսիսային կողմերումն ևս գտնվում են մեծամեծ կղզիացեալ գաղթականութիւններ, որոնք երկար ժամանակ հայրենի երկրից բաժանուած լինելով՝ ոչ թէ ներկայ աշխարհաբառն են խօսում, այլ իրենց հին գրական լեզուին մօտ լեզու։ Անգղիոյ մէջ միակ հայկական գաղթականութիւնն այն է, որ Մանչեստր է գտնվում. բայց մենք Հնդկաստանում բաւական ապացոյց ունենք, որ բրիտանական կառավարութեան ապահովութիւնից նրանք, հայերը, մեծապէս օգտուել են և շատ շատերը Կալկաթայում և Բոմբայում ընչեղ մարդիկ են եղել։ Այն իրողութիւնն, որ հայք ուրիշ պետութեանց մէջ զարգանում են, մինչդեռ իրենց հայրենակիցները հայրենիքում չարչարանքներ են կրում՝ մեր ներկայ դիտողութիւնների բարոյականն է։ Մինչդեռ ուրիշ քրիստոնեայ ազգեր կոկիծ են զգում այս լուրերը լսելով, ինչպէս է որ օտար երկրների մէջ բնակուող հայերը այսքան անզգայ են երևում։ Այս հարցը առաջարկելու միջոցին մենք ուզում ենք ակնարկել այն համակրութեան, որ պէտք է երևան դար գորովալիր ղղացմամբ և դրամական առատ նպաստով։ Օրինակի համար Կալկաթայի հարուստ և ազդեցիկ հայերը. շատ հաճելի կ'լիներ մեզ տեսնել հայրենասիրական ղղացման և առատաձեռնութեան մի յայտնի ցոյց նրանց կողմից։ Մի ժողով, մի ազգային օգնութիւն և միջամտութիւն, եթէ նոյն իսկ մի գործնական արդիւնք ևս չունենար՝ դէթ ցոյց կ'տար իրենց ազգակցութիւնը հայրենիքում եղող ժողովրդեան հետ։ Արդարև սովորական բաների մէջ ազգային ոգու պակասութիւն ցոյց չեն տալիս նրանք և իրանց ընտանեկան կենաց և ամուսնութեան մէջ արենակցութիւնը պահպանում են։ Նրանք սովորաբար հաւատարիմ են իրենց հայրենի կրօնին, ուր որ լինեն և պարծանք են համարում իրենց, որ պատկանում են կաթուղիկէ եկեղեցւոյ հնագոյն ճիւղերի մինին որից չեն կարողացել բաժանել իրենց ոչ Հռովմէական եկեղեցու հալածանքները և հրապոյրներն և ոչ էլ Ամերիկեան երեցականաց անդուլ ջանքերը։ Ուր որ լինի նրանց բնակավայրը, Հայկի հին լեզուն տակաւին սիրվում և խօսվում է նրանց մէջ, թէպետ և տարբեր բարբառներով։ Հայերը Մոսկովում, Վենետիկում, Պարսկաստանում և Կալկաթայում, ըստ էութեան, միևնոյն լեզուն են խօսում։ Այսքան անցեալ և ներկայ կապերով կապուած՝ պիտի ակընկալուէր որ իրենց հայրենիքի վիճակը՝ այդ նուիրական երկրի դրութիւնը՝ մեր մէջ բնակուող հայերի սիրտը զգացմամբ լցնէր։ Սակայն հայրենասիրութեան ոգին այնպէս բնաջինջ է եղել նրանց սրտից, որ մինչդեռ օտարազգերը խօսում են, հետաքրքրվում նրանցով, օգնութեան ձեռք են կարկառում նրանց հայրենակիցներին, սրանք, հնդկահայերը, որ և է մի նշան անգամ չեն ցոյց տալիս, որ և քայլ անգամ չեն անում։

Ս. Ֆ.

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

15 դեկտ. 94

Պատահմամբ կարդացինք արտասահմանում հրատարակուող մի հացկատակ թերթի № 28-ում Սալմաստից գրուած մի թղթակցութիւն, որի մէջ յօդուածագիրը շռայլելով մի քանի փրուն գրուատներ Թաւրիզում ձեռնադրուած երկու անձնաւորութիւնների՝ Արսէն արեղայ Վեհունու և Գարեգին քահանայ Պետրոսեանի հասցէին, առաջ է բերում հետևեալը «Տարին սրբազնութիւնը մի և նոյն օրը ձեռնադրած էր և մի ուսեալ քահանայ որով Առաքելականի թեմին երկու թանկագին ընծաներ ըրաւ»...։

Այս երկու թանկագին ընծաներից մինը մի փափուկ կարող է (Արամ Պետրոսեան), որը ձեռնադրուած է Ուրմու թեմի համար և նշանակուած բարեկարգիչ։

Միւսը հանրածանօթ Արսէն Վեհունի Երիցեանն է, որ ձեռնադրուած է արեղայ և նշանակուած Սալմաստի նման մի հայաշատ գաւառում յաջորդ թեմական առաջնորդի և բարեկարգիչ գործակալ։

Ես անձամբ շատ մօտիկ ծանօթ լինելով այդ երկուսին ևս, համբերութիւնից դուրս եմ գալիս՝ կարդալով հացկատակ թերթի շռայլած միանգամայն անտեղի գովեստները։ Թէև իմ նամակը պիտի երկարանայ և գուցէ դրանով ձանձրոյթ պատճառի «Շաւիղի» յարգելի ընթերցողներին, բայց կուզէի մի թեթև ծանօթութիւն տալ այդ երկու ծանր և պատասխանատու պաշտօնները վարողների մասին։ Թշուառ Ատրպատականի թեմին ընծայուած այդ թանկագին ընծաներից մէկը (Արամ Պետրոսեան), ինչպէս ասացի, զուրկ է ամենատարրական ուսումից ու կրթութիւնից և մինչև իսկ հասարակ ընթերցանութիւն անգամ չը գիտէ։

Նա առաւել հմուտ է ձեռնածութեան մէջ, դեռ քահանայ չը ձեռնադրուած՝ Սալմաստում մտադիր էր ձեռնածութիւններ անել։ Այդ նպատակով նա չինել տուեց զանազան գործիքներ և պատրաստում էր իւր ճարպկութիւններով հիացնել սալմաստցիներին։ Ցանկարծ, որտեղից որտեղ, նրա մտքումը ծագում է քահանայ ձեռնադրուել (ապրելու մօղոդիկքերը խափենէր, Հայրիկի ղրկած էդ փողից 150 թիւման առնեներ վարթըպետի խրմայ... (ինչ տեղը գիդիրե՞ն...։)

Վայ ինձի, մեղքս ասեմ, կինացիմ աղայիս կուշտը, ասիմ բալամ, աղա Բուդաղ, դիւն ջահիլես, խելքդ չ'տաս Մուխսի Օվանէսի խելքին հա, տես, էդ 150 թիւմանը կ'տաս վարթըպետը կ'ուտի, եախէթ կ'մնայ Թարվէզի ջոչ առաջնորթի ձեռայ...։ Օհո՞, էդ մօղոդիկքերուն ես կ'ճանչնամ, Աստուծու մալը կուտեն, իւր մնաց Հայրիկինը...։ Նանը լաւ էր, փիրելը, լաւ խօսկիս, առաւ աղէկ ես պսելի, չեմ ասայ, ամմա վախենասեմ էլի խափեն առնեն։

Իշտ ես եմ սրսնալի, էդ վարթըպետը առանց խոքիպաժինի մեռել չի խորելի, ֆիքը եմ անելի, ես էլ ահիլ մարթ եմ, էսօր կամ, կանոխ չ'կամ. հազրը քեանի սաղ եմ, իմ ձեռովս կտակս անեմ, խօքեպաժինս տամ, որ մեռնելուս համ շուտ խորճրկենս, համ էլ ողորմի տան։

Ես Սալմաստ գաւառի Փայաջուկ կեղացի Գարրուղս խելքս գլխիս, յուշս վրես, իմ յօժար կամքովս իմ ունեցած չունեցածս կտակ եմ անում էս մարթներին։

—

ՑՈՒՑԱԿ

Թարվէզի ջոչ առաջնորթին.—Մի դիւժին տիրացու։

Թարվէզի նոր Կոնձիստորին.—Նիստը բանալու մի զանգակ։

Թարվէզու վարժապետերին.—Մի հաշտարար դատաւոր։

Սալմաստի կարքիչ վարթապետին.—Երկու փողի մեծ տոպրակ։

Մեր տեսուչին.—Մի ջուխտ ֆառռաչ։

Ուրմի տէր Գարեգինին.—Ձեռնածու Բոքերդ Լէնցից մի ոսկեղօծ վիայական։

Մահլամի վարժապետին.—Մի սուր մկրատ։

Փայաջուկի ռասց լեզուի վարժապետին.—Երեցփոխի բառարանն։

Փայաջուկի աւագ ուսուցչին.—Մի արկղ պուդրա։

Հաֆթուանի վարժուհուն.—Մի ղազիլի չուան (որ էն անտեր պարցը կապի)։

Հաֆտուանի Ասատուր վարժապետին.—Մի ցախաւել։

—

Ինչ բունեմէր, չունեմէր ըմէն պաժնիմ, ագիար Սալմաստի դիւղիար վարժապետերը սրբասմնայ կլէն, թող էթան Աղա Արղումանենց մեշները...։

Էլ զադ չունեմ, պարոն «Շաւիղ», դիւն սաղ, ես սալամաթ։

Մնամ քիոյ խոնար ծառայ

Գարրուխ

(Յուշատետր Վարդապետաց Ազգանունից.)

Վարթըպետը մէ թուխտ'ի չինի ուր խմա, ասելի թող ժողովուրթը տեար թէ քեաշի, որ վարթըպետը շամ, շատ աղէկ մարթ'ի, որ դեար լըման վարթըպետը ուր օրըմը ըսկի Սալմաստ չի էկի, որ սուրթի չար մարթու խաք'ի որ ասեսեն վարթըպետը Հին-քաղաք, Պատրխանայ կնիկ'ի թըրի, որ վարթըպետը ջամայ չի առի, որ վարթըպետը խոքեպաժին չ'ուզելի, մախլաս, խաղար դեար լըման զաղեր...։ Ուզեսեն էդ թուխտը Թարվէզ ջոչ առաջնորթին ղրկէն, իշտ էրվալի, առաջնորթը էդ վարթըպետի պոչը կոխիր'ի....։ Ամմա շատ փիս մառուքքերը էրվաւ. Սալմաստի իշխանքերէն իսկի մէկը թէ չ'տրաւ էդ թուխտին, մէ քեանի հաւթուանցի խաստրփոր կինի խմողքեր թէ տըրին....։

Աղէկ, խոքին ըլը, թող ղրկեն Թարվէզ, խո Թարվէզի ջոչ առաջնորթին էլ լավ սարը չի ջոչացէ, կ'խասկընայ որ սուրթ'ի, դեար խըմայ Սալմաստէն մէ մարթաւորի մարթ թէ չի տրի էդ թուխտին։

Մըկայ էդ օր պռնող տեսուչը իւր էրթալի, շունով էն պեճելի... ամմա, երեսը արուռ չ'կայ, դռնէն պեճեսէս, էրթիսէն իկելի... չ'ամչնալի է՞լը...։ Ջադուբազի լման խայիր թուխտ'ի դրի ծոցը. վայ---վա՛յ, որ պարով աս. ալբալ պինդ բռնելի եախայէդ, մէ զամդան կօ տրիրի ջէրը՞, խօրատ խանելի, ըլելի ծէթ, ծամոն, ասելի տաղա թէ քաշէր.... տօ եռանդ մէ թուխտ էն չինէ, ուզեսեն ղրկէն էս տիրին թլֆիզ, ուրանց լման մէ կազէթ կիրող'էն գիտի ուզեսեն դաղ կազէթ քիցեն որ» մեր տեսուչն էլ վարթըպետի լման՝ շատ աղէկ մարթ'ի...։»

Ջանրմ, մենք տրսիրենքէր դարալային, հուշաթին, բէյնամին վրկայ կ'կիրվեն էր, չ'ենքեր տրսի կազէթի թուխտին վրկայ կիրվելը... էդ էլ թաղա խանին...։ Ամմա էս տիրին թրքին աշկի մեշը, պեճին կինաց... ասին, ախպէր, խօ տիւն մեզի ձեռք չ'քիցիր, օրը մէ սուրթ զաղես կիրելի, ասեսես դարը ձեռ քիաշէք, էլ չենք քեաշի... մըկայ գինասենք ձեր ըմէն զաղը սուրթ'ի։

Եռանդ Հայրիկէն խնդ-խայիր թիման փող էր էկի Խուդոյի լաճուն Աղա Բուդաղին, որ հոռներէն վարը շատ անճար քեասիր'ի դանցը բաժնենէր. Ալլահ գօյսա-ուրանց մէշը պաժնին.... հոռներէն վեարը որ զալմ էր՝ տասը տիր առաւ, վեարը որ անճար էր, խեղճ էր, ըսկի մէ տիր էլ չ'առաւ....։

Գաղիր Աղա Բուդաղը կանչիր էր Մուխսի Օվանեսին, որ դէ իշթար ըլը էն կեղի աղասախկալ'ի, ահիլ մարթ'ի, էն աղէկ կ'բաժնի. ամմա մեր Մուխսին էլ շատ աղէկ պաժնե՛ց...։ Վերցեսէր հոռներէն վեարի կնիկը խօրատ էր դեար բաժինը եղով էր անելի... վեարին կընիկ չունէր, ես մէպրծաւ կէշ էր՝ վա՛յ դեար հալին...։

Հալա էդ չահանամ, տօ, ուզեսենէր էդ Սալմաստից գրուած մի թղթակցութիւն, որի մէջ յօդուածագիրը շռայլելով մի քանի փրուն գրուատներ Թաւրիզում ձեռնադրուած երկու անձնաւորութիւնների՝ Արսէն արեղայ Վեհունու և Գարեգին քահանայ Պետրոսեանի հասցէին, առաջ է բերում հետևեալը «Տարին սրբազնութիւնը մի և նոյն օրը ձեռնադրած էր և մի ուսեալ քահանայ որով Առաքելականի թեմին երկու թանկագին ընծաներ ըրաւ»...։

Այս երկու թանկագին ընծաներից մինը մի փափուկ կարող է (Արամ Պետրոսեան), որը ձեռնադրուած է Ուրմու թեմի համար և նշանակուած բարեկարգիչ։

Միւսը հանրածանօթ Արսէն Վեհունի Երիցեանն է, որ ձեռնադրուած է արեղայ և նշանակուած Սալմաստի նման մի հայաշատ գաւառում յաջորդ թեմական առաջնորդի և բարեկարգիչ գործակալ։

Ես անձամբ շատ մօտիկ ծանօթ լինելով այդ երկուսին ևս, համբերութիւնից դուրս եմ գալիս՝ կարդալով հացկատակ թերթի շռայլած միանգամայն անտեղի գովեստները։ Թէև իմ նամակը պիտի երկարանայ և գուցէ դրանով ձանձրոյթ պատճառի «Շաւիղի» յարգելի ընթերցողներին, բայց կուզէի մի թեթև ծանօթութիւն տալ այդ երկու ծանր և պատասխանատու պաշտօնները վարողների մասին։ Թշուառ Ատրպատականի թեմին ընծայուած այդ թանկագին ընծաներից մէկը (Արամ Պետրոսեան), ինչպէս ասացի, զուրկ է ամենատարրական ուսումից ու կրթութիւնից և մինչև իսկ հասարակ ընթերցանութիւն անգամ չը գիտէ։

Նա առաւել հմուտ է ձեռնածութեան մէջ, դեռ քահանայ չը ձեռնադրուած՝ Սալմաստում մտադիր էր ձեռնածութիւններ անել։ Այդ նպատակով նա չինել տուեց զանազան գործիքներ և պատրաստում էր իւր ճարպկութիւններով հիացնել սալմաստցիներին։ Ցանկարծ, որտեղից որտեղ, նրա մտքումը ծագում է քահանայ ձեռնադրուել (ապրելու հեշտ միջոց)։

Այդ մտադրութիւնը շատ նպաստաւոր են գտնում իւր ընկերները և ամեն միջոց գործադրում են յաջողեցնել նրա ձեռնադրութիւնը Սամաստի գլխաւոր գիւղերից մէկում։

Մի զեղեցիկ օր նա նորից ի լոյս է ընծայվում Սալմաստում, երկար փառահեղ մօրուքով, քահանայական ամլազէ վերարկուն հագին, ծոցին թեմական առաջնորդի հրամանները, մի առանձին պարծանքով յայտարարում ի գիտութիւն, որ «Առաջնորդը Ուրմիոյ թեմին համար բարեկարգիչ նշանակէր է դիս։» Մինչև իր ընտանիքը Ուրմի տեղափոխելը, տէր հայրը իրեն յատուկ եռադուն բնաբորութեամբ, չի ուզում հանդստանալ, այլ նախ քան իր պաշտօնատեղին գնալը, ցանկանում էր մի քիչ էլ Սալմաստում բարեկարգութիւններ մտցնել և ահա սկսում է իր գործունէութիւնն։ Հաֆթուան գիւղում մատուցանում է անդրանիկ պատարագ, որից ինչպէս ինքն էր սպասում, առատ հունձ է ունենում Սալմաստի բարեպաշտ ժողովրդից։ Սակայն տէր հայրը դրանով չը բաւականանալով, հնարում է չը տեսնուած և չը լսուած օյինբազութիւններ, սկսում ամենատոր միջոցներով փող կորզել ժողովրդից։ Օրինակ, նա ամեն տեղ քարոզում էր, որ մահացու մեղք է Թուրքից գնուած խաղողը առանց օրհնելու գինի պատրաստել. մանաւանդ՝ որ ս. հաղորդութեան գինին հերթով գիւղացիք են մատակարարում իւրաքանչիւրը իր եկեղեցուն։ Փիլոնը թեկ տակ՝ հրակայական պտոյտներ էր որ գործում էր գիւղից գիւղ և անձամբ ամեն տեղ Թուրքից թէ հայից առնուած խաղողը իր նոր ծէսով օրհնում։ Ցարուայ եղանակն էլ նպաստում էր տէր հօրը, ճիշտ գինիներ պատրաստելու սէզոնն էր։

Վերջապէս անցեալ հոկտեմբերի վերջին «Հրաժարիմքի» հրաժարական ողջոյնը տուինք տէր հօրը, և նա թողնելով Սալմաստը, դիմեորվում է Ուրմի իւր պաշտօնատեղին, այնտեղ ևս մտցնելու իր բարեկարգութիւնները։

Փիր-Շաղուշ

Թարվէզու վարժապետերին.—Մի հաշտարար դատաւոր։

Սալմաստի կարքիչ վարթապետին.—Երկու փողի մեծ տոպրակ։

Մեր տեսուչին.—Մի ջուխտ ֆառռաչ։

Ուրմի տէր Գարեգինին.—Ձեռնածու Բոքերդ Լէնցից մի ոսկեղօծ վիայական։

Մահլամի վարժապետին.—Մի սուր մկրատ։

Փայաջուկի ռասց լեզուի վարժապետին.—Երեցփոխի բառարանն։

Փայաջուկի աւագ ուսուցչին.—Մի արկղ պուդրա։

Հաֆթուանի վարժուհուն.—Մի ղազիլի չուան (որ էն անտեր պարցը կապի)։

Հաֆտուանի Ասատուր վարժապետին.—Մի ցախաւել։

—

Ինչ բունեմէր, չունեմէր ըմէն պաժնիմ, ագիար Սալմաստի դիւղիար վարժապետերը սրբասմնայ կլէն, թող էթան Աղա Արղումանենց մեշները...։

Էլ զադ չունեմ, պարոն «Շաւիղ», դիւն սաղ, ես սալամաթ։

Մնամ քիոյ խոնար ծառայ

Գարրուխ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թէհրան փետր. 2

Հաճեցէք էլի մի անգամ տեղ տալ իմ երկտող նամակիս։

«Շաւիղի» № 1-ում մի նամակ էի գրել, որով պատմել էի մեր ծուխի Տէր Մաշտոց քահանայի արարքը։ Այն օրւանից մինչև այժմ, մի տեսակ մարդիկ կան, որ զահլաս տարին. դիմում են ինձ և անդադար ասում. «քեզ ինչ կը վերաբերէր այդ. դու իրաւունք չունէիր խօսելու». ես հարցնում եմ— «սխալ էի գրել». ասում են—ոչ, շատ լաւ էիր գրել, բոլորն ճիշտ էր, բայց դու իրաւունք չունիս»....

Չեմ իմանում ինչու. երեխայ խօ չեմ 25 տարեկան եմ արդէն. աչք էլ ունեմ որ տեսնեմ, ականջ էլ որ լսեմ։

Դուք գիտէք թէ ինչու են ինձ ասում որ իրաւունք չունիմ։

Բանից երևում է, որ իրաւունք ունի խօսել միայն այն մարդը, որ յիշատակաչարչար Բաֆֆիի անունը վրան կրող ընկերութեան անդամ է, որ Յ. Դասպարեանց անունով վարժապետի պաշտպան է և կամ շատ ուրիշ այդպէս մարդերի կողմիցն է։

Բանից դուրս է գալիս, որ իրաւունք ունի միայն խօսելու նա, ով որ «Շաւիղին» թշնամի է և անկիւններում պրպտած՝ նրա վրայ խօսում է, առանց քաջութիւն ունենալու հրապարակ դուրս գալու։

Բայց ես այս նամակը գրում եմ հէնց նրա համար, որ ցոյց տամ թէ ես միշտ իրաւունք ունիմ խօսելու և պիտի խօսեմ էլ, երբ ասելու բան ունենամ։

Բարկանում են աղաները—թող բարկանան. այս տարի Թէհրանում սառուց շատ են պատրաստել. իրենք ողջ մնան։

Մարտիրոս Կ. Բարսեղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեր թերթին արտասահմանից գրել ցանկացողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել մեր ցոյց տուած հասցէին։ Փողերի ծրարները պիտի ուղարկել միմիայն Ռուսաց դեսպանատան միջոցով. հակառակ դէպքում նրանք ուշանում են։ Բազմաթիւ յայտարարութիւններ ստանում ենք փողերի ծրարների համար, բայց ծրարները հազիւ 2 ամսից յետոյ մեզ հասնեն. այդպիսով յայտնի չէ լինում գոնէ բաժանորդ գրողների հասցէն, որ կարողանանք թերթը առաջուց ուղարկել։

—

Մեզ հաղորդում են, որ առաջնորդական փոխանորդը Սպահանից ստացել է մի հեռագիր հրաման, որ Դարվազա գաղթին եկեղեցու քահանայ տէր Մաշտոցին դատարեցնեն պաշտօնավարութիւնից։ Ուրախ ենք. միայն զարմանում ենք նրա վրայ, որ այդ հրամանը դեռ չէ կատարել. Վարդանանց տօնի օրը պատարագիչը էլի տէր Մաշտոցն էր։

—

«Շաւիղի» դէմ սաստկացել են ստորաքարշ մեքենայութիւնները։ Ոչ մի հայկական թերթ այսպէս չէ հալածւել. մինչև իսկ փողոցային սրիկաների է գրգռած որ հայհոյեն խմբագրութեան մէջ աշխատողների ետևից, երբ վերջիններս անցնեն փողոցից։ «Շաւիղը» վերջին անգամն լինելով յայտնում է, որ չէ վախենում ոչ անկիւններից ժայթքող հայհոյանքներից և ոչ էլ դօնքիշոտական սպառնալիքներից. նա կը շարունակէ իր գործը և խորին արհամարհանքով կը պատասխանի իր այդ տեսակ թշնամիներին. մինչև իսկ պատիւ չի անել նրանց իրեն թշնամի համարելու։ Նա երդուել է որ եթէ իրեն վիճակւի իսկ անհաւասար կռիւում ընկնել, պիտի ընկնի իր դրոշը միշտ ամուր ձեռքին սեղմած։

—

Փետրվարի 9-ին, Հինգշաբթի, մի մեծ զօրահանդէս կայացաւ ի պատիւ ռուսաց արտաքոյ կարգի դեսպան գեն. Կուրապատկինի։ Զօրահանդէսը շատ շքեղ էր։

—

Հայկազեան դպրոցին օժանդակող նոր կազմուած ընկերութիւնը կրում է «Հայկազեան Սէր» անունը։ Նախաձեռնողները են եղել եղբ. Թումանեանք և Վ. բէյ Դադեանը։ Ընկերութեան առաջին նիստում ընտրուել են, ատենապետ՝ Վ. բէյ Դադեան, զանձապահ՝ եղբ. Թումանեանցների Թէհրանի գործակալը։ Եօթ հիմնադիր անդամները դրել են այսպիսի գումարներ իրը հիմնաքար։ Եղբ. Թումանեանք 300 թուման. Արամ Քարամեանց 200 թ., Դասպար Տէր-Յովհաննիսեան 150 թ., Ռափայէլ Թադէոսեան 100 թ., Վահրամ բէյ Դադեան 100 թ. Բաղդասար Աւագեան 100 թ., Ալէքսան Ասլանեան 100 թ.։ Բացի սրանցից, նոյն երեկոյ ներկայ եղող մի քանի անձեր նուիրել են հետևեալ գումարները—Աբրահամ Մելիք-Աբրահամեան 50 թ. Արամեան ընկ. 12 թ. տարեկան. Ալբերտ Տէր Յովհաննիսեան տարեկան 12 թ., Արշակ Մ. Պետրոսեան տարեկան 12 թ., Ղուկաս Յովսէփեան տարեկան 10 թ. իսկ 5 տարուց յետոյ 100 թ. նուէր. Յովհաննէս-խան Մասէհեան 50 թուման նուէր։ Այսպիսով մինչևայժմ գոյացել է մօտ 1600 թուման։ Գործը շարունակվում է և որովհետև գործի գլուխ անցնողները աշխատող և անկեղծութեամբ գործող անձինքներ են, յոյս ունենք որ շուտով Հայկազեան դպրոցը կը դնեն այնպիսի դրութեան մէջ, որ այլ ևս նա չի ըստիպւի մուրացկանութիւնով ապրել։

—

Ստացանք Թիֆլիսից, Մ Զմշկեանի հրատարակութեամբ լոյս տեսած էլի մի օրացոյց։ Սա աշխարհիս ստեղծագործութիւնից մինչև այժմ եղող թիւը աւելի պակասացրած՝ շինել է 5509 տարի, իսկ գիտնականների կարծիքով միայն 14000 տարի (!!)։ Երևի այդ գիտնականը ինքը պ. Զմշկեանն է։

—

Մի քանի օր է որ Թէհրանի լուրերը աւելի շատ տեղ են բռնում մեր թերթի մէջ քան ուրիշ տեղերի լուրեր։ Բայց խօստանում ենք որ այսուհետև այս փոքրիկ հայ հասարակութեան մէջ դարբնուող զգուելի ինտրիգաները այլևս մեզ չեն գրաղեցնիլ։ Վերջերս էլ ստացուել է մի ձեռագիր փողոցային թերթ, փողոցային անունով։ Այդ թերթը վիրաւորանքներ է հաղորդում զանազան մասնաւոր անձերի, իսկ վիրաւորածները թերթի խմբագրութիւնը վերագրում են այնպիսի անձերի, որոնք եթէ կամենային գրել, պէտք չունէին ձեռագիր փողոցային թերթեր խմբագրելու։ Միայն անմիտ մարդիկ կարող են յուզուել այդպիսի թերթերի վիրաւորանքներից։ Թերթը, ըստ երևոյթին շինուել է Թաւրիզում. չը լինի թէ այդ է այն խոստացած թերթը, որի մասին «Շաւիղը» յայտնել էր իր անցեալ տարուայ վերջին մի համարում։ Եթէ այդ է, կեցցեն ուրեմն հրատարակողները։

—

«Մշակ» լրագիրը գրում է. «Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ դարձանը կը սկսվին հետազօտութիւններ Բագուից մինչև Թէհրան երկաթուղու գիծ անցկացնելու համար։

—

Ռաշտից գրում են։ Վարդանանց տօնի օրը այստեղ կը կայանայ թէ հանդէս և թէ ներկայացում։ Առաջիկայ կիւրակի, փետրվար 5-ին վիճակախաղը կը լինի։

—

Մի սպահանցի հայ Թէհրանից, մեզ գրում է հետևեալը։ «Մեզ գրում Սպահանից ս. Եսայի արքեպիսկոպոսի հետեւեալ անախորժ ընթացքի մասին. Ծընդեան տօնի առաւօտեան, պատարագին ներկայ լինելու է հրաւիրվում Զուղայի բողոքականների Bishop Stewert քարոզիչը, որ ընդունելով եպիսկոպոսի հրաւէրը՝ եկեղեցի է գալիս ընկերակցութեամբ ծերունի հայ բողոքական Մնացական Գէորգեանցի։ Երբ ն. ս. դառնում է դէպի ժողովուրդը (որովհետև ինքն էր պատարագիչ) և նկատում է վերոյիշեալ հային, մարդ է ուղարկում սեղանից՝ երթալու և պ. Մնացականին եկեղեցուց դուրս անելու։ պ. Մնացականը պատասխանում է թէ «շատ լաւ, Աւետարանի ընթերցումից յետոյ կերթամ». բայց այս պատասխանով Եսայի եպիսկոպոսը չէ բաւականանում. ժամերգութիւնը դատարեցնում է և մի ուրիշ քահանայի է ուղարկում որ երթայ և անմիջապէս դուրս ձգէ եկեղեցուց հայ բողոքականին։ Ժամերգութիւնը վերսկսում է այն ժամանակ միայն, երբ պ. Մնացականը դուրս է ձգվում։»

—

Ղուչան քաղաքի յունվար 17-ի երկրաշարժը ճիշտ է։ Երեք բոպէի մէջ քաղաքը քարուքանդ է եղել։ Հարիւրաւոր անձեր միայն մզկիթների աւերակների տակ են մնացել, նոյնքան էլ բաղնիսներում։ Կենդանի մնացածները երեք օր չեն կարողացել ուտեստ ճարել։

ՀԵԳԱԳԻՐՆԵՐ

Բանդ-Կոկ. 6/18 փետր. Տեղի է ունեցել մի թեթև խռովութիւն Ֆրանսիական զօրաբանակի և սիամցիների մէջ։ Բաւական թւով վիրաւորուածներ են եղել։

Լօնդօն. 6/18 փետր. Լիհունգ Զանգ փոխարքային վերադարձուեց իր նախկին բոլոր պատիւները և յանձնարարուեց դնալ Ժապօնիա, խաղաղութեան դաշինքների մասին բանակցելու։

Բերլին. 4/16 փետր. Մեծ յուզում է առաջացել Գերմանիայում յօգուտ բիմետալիզմի. վիճաբանութիւն է տեղի ունեցել ըէյխստագում։

Լօնդօն. 5/17 փետր. Վէյ-Հայ-Վէյում եղած բոլոր օտարականները ազատ են թողուած, բացի մի ամերիկացուց։ Գրաւման մէջ չինացիք ետ քաշուեցին 2000, մեռեալ թողնելով։

Բերլին. 5/17 փետր. Ըէյխստագը երկու վճիռ տուաւ միջազգային դրամական կոնգէրս հրաւիրելու։

Լօնդօն. 6/18 փետր. Վէյ-Հայ-Վէյում կատարեալ անձնատուր եղաւ. չինական զինուորներն ու նաւաստիները ազատ են թողուած, իսկ սպաները փոխադրուած։ Չինացիք յարձակուեցին Հաիչինգի վրայ Մանչուրիայում, 16-ին, բայց ետ մղուեցին մեծ կորուստով։

Նուբար փաշայի և մի քանի ուրիշ մինիստրների դէմ ինտրիգաները օրէցօր աւելի խիստ կերպարանք են ստանում և եգիպտական մամուլը աւելի կծու կերպով է վերաբերվում դէպի նրանց։ «Թէյմզի» թղթակիցը հեռագրում է Գահիրէից որ այդ ինտրիգները ազդում են խեդիվի վրայ և նա մտադիր է ոչնչացնել այն բոլոր նախարարներին, որոնք համակրում են անգլիական կօնտրոլին։ Կարծվում է որ փորձեր են լինում մահմեդական հասարակութեան քրիստոնեաների դէմ շարժումներ անելու, որպէսզի թէ տեղի պիտի ունենայ բամբասանի օրերում։ «Times» լրագիրը առաջնորդողներ է նուիրում այդ մասին և պնդում է որ եգիպտական գործերը լուրջ կերպարանք սունին, ցոյց է տալիս այն դժբաղդութիւնը որ ունի Եգիպտոսը, ունենալով այժմեան խեդիվի պէս մի անուղղելի կերպով անհանդարտ իշխան։ Միւս կառավարութիւնները, ասում է «Times», շահ ունին Եգիպտոսի այժմեան խառն դրութիւնից։ Եգիպտոսը ուրախ կը լինի եթէ ազատվի այժմեան անփորձ իշխանից։ Մեծ Բրիտանիոյ փափագն է որ խեդիվը մնայ և նրա ցեղական իշխանութիւնը ապահով լինի, այն պայմանով միայն, որ նա ոչ մի փորձ չանի այժմեան սիստեմի դէմ և անգլեական շահերի դէմ չգործի։

Գործաւորների պակասութեան պատճառով, մի քանի հմամար իր որոշեալ օրերից ուշ հրատարակուեց. № 5-ից ընկած կ'աշխատենք իր որոշեալ օրերում լոյս հանել թերթը։

Արտօնատէր—Հրատարակիչ
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ